Պարույր Սևակ

Կրկնվող հանելուկ

Նա եկավ հանկարծ:
Անշո՛ւնչ-անշշո՛ւկ, գողեգո՛ղ եկավ:
Եկավ
Ու մտավ... մազերի՛ս միջով
Ու կրունկների՛ս:
Եկավ
Ու նստեց թիկունքի՛ս վրա
Եվ կրծքի՛ս վրա:
Դիմակի նման հագավ իր դեմքին,
Իրենով և իմ ներսը հագցրեց:
Ու չհասկացա, թե որտեղի՞ց է
Եվ ինչացո՞ւ է...
Չկա ձա՛յն-ծպտո՛ւն,
Շարժո՛ւմ որևէ,
Որևէ պատկե՛ր:
Չկա խո՛րք-հատա՛կ,
Մակերե՛ս չկա,
Եվ ո՛չ էլ միջուկ:
Կա լոկ աններկա մի ներկայություն,
Ինչ-որ անմարմին-անտես մի աստված...
Ու ես ակամա կաշկանդված-ազդված,

Ինչպես անգիտակ սարյակի ձագը օձի հայացքից՝
Ես հանձնվեցի հավիտենության երանությանը...
Ես դարձա համակ մագնիսական դաշտ...
Դարձա հոսանքի մի կարճ հաղորդիչ...
Մեռա կամովի՛ն ու շնորհակա՛լ...
Ու շնորհակա՛լ...
Ու շնորհակա՛լ...
Դա ինչքա՞ն տևեց:
Մի դա՞ր:
Մի վայրկյա՞ն:
Մի ողջ մոլորակ ստեղծվեց մեզից,
Ապա դարձավ մեզ...
Եվ միայն հիմա՝
Այսքանի՛ց հետո,
Ես սկսում եմ կարծես կռահել,
Թե դա ինչի՞ց էր
Ու թե ի՞նչ էր դա:
Դա մեղմությունն էր...

24.XII.1964թ.
Երևան